

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

14.04.2006թ.

ժ. 11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Վ. Դանիելյան, Հ. Պետրոսյան, Գ. Գևորգյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Լ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Ա. Հարությունյան (*Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ*), Հ. Տիտիզյան (*Ֆինանսների վիճակագրության բաժնի պետ*), Ա. Պետրոսյան (*Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ*)

Օրակարգի նախագծում՝ հինգ հարց.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի ապրիլի 26-ի թիվ 03-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

/Ձեկուցող՝ Վ. Դանիելյան/

2. «Կազմակերպության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ» Ձև թիվ 3-ՖՀ հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին

/Ձեկուցող՝ Վ. Դանիելյան, Հ. Տիտիզյան/

3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

/Ձեկուցող՝ Ա. Հարությունյան/

4. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի մայիսի 25-ի թիվ 03-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

/Ձեկուցող՝ Ա. Հարությունյան/

5. Այլ հարցեր

5.1 Հաշվետվություն 2006թ. մարտի 6-7-ը Լյուքսեմբուրգում արտաքին առևտրի վիճակագրության գծով կազմակերպված աշխատանքային սեմինարին մասնակցության վերաբերյալ

/Ձեկուցող՝ Վ. Դանիելյան, Ա. Պետրոսյան/

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի ապրիլի 26-ի թիվ 03-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

/Ձեկուցող՝ Վ. Դանիելյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի ապրիլի 26-ի «ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից վարվող 12 խումբ տվյալների մեթոդական նկարագրությունների (մեթատվյալների) հայերեն լրամշակված տարբերակը հաստատելու մասին» թիվ 03-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Բոլոր 12 խումբ տվյալների մեթոդական նկարագրությունների (մեթատվյալների) բազային էջերի «Հանրության համար հասանելիություն» հատվածների «Տվյալների թողարկման նախնական օրացույցի տարածում» բաժինների երկրորդ պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2006 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատվել է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 37-Ն որոշմամբ: 2006 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի հայերեն տարբերակը տեղադրված է ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջի հետևյալ հասցեում՝ http://www.armstat.am/arm/Law/SR_06/index.html:»

2. «Աշխատանքի շուկա. Գործազրկություն» մեթատվյալի բազային էջի «Տվյալներ. ընդգրկումություն, պարբերականություն և ժամանակայնություն» հատվածի «Ընդգրկության բնութագրեր» բաժնի երկրորդ պարբերությունը և ամփոփ մեթոդաբանություն էջի «I. Վերլուծական հիմք. հիմնադրույթներ, սահմանումներ և դասակարգումներ» հատվածի «Հիմնադրույթները և սահմանումները» բաժնի առաջին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Համաձայն «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, պաշտոնապես գրանցված գործազուրկներ համարվում են հանրապետության տարածքում մշտապես բնակվող աշխատունակ և գործունակ տարիքի (16 և ավելի) աշխատունակ այն քաղաքացիները, ովքեր չեն ստանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակներ, ունեն 1 տարուց ոչ պակաս աշխատանքային ստաժ, դիտարկվող ժամանակահատվածում չեն ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք, զբաղվածության տարածքային կենտրոնների միջոցով փնտրել են աշխատանք և պատրաստ են եղել անմիջապես կամ օրենսդրությամբ սահմանված ժամանակահատվածում անցնել աշխատանքի:»:

3. «Բնակչություն» մեթատվյալի բազային էջի «Որակ» հատվածի «Տվյալների տարածումը, որը հնարավորություն է տալիս իրականացնել խաչաձև վիճակագրական ստուգումներ և տալիս է հիմնավորվածության երաշխիքներ» բաժնում.

ա/ 7-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի կանայք և տղամարդիկ» վիճակագրական գրքույկ. (1) քաղաքային և գյուղական բնակչությունն ըստ սեռի և հիմնական տարիքային խմբերի 1990 և 2004թթ., (2) բնակչություն, ծնելիություն, մահացություն 1939-2004թթ., (3) միգրանտներն ըստ տարիքի 1991-2004թթ., (4) կյանքի սպասվող տևողությունը ծննդից 1958-2004թթ., (5) պտղաբերության գործակիցը 1965-2004թթ. քաղաքային և գյուղական կտրվածքով, (6) ծնվածների բաշխումն ըստ ծննդի հերթականության և սեռի 2000-2004թթ., (7) ամուսնական վիճակն ըստ տարիքային խմբերի, 2001թ., (8) 1990-2004թթ. քաղաքային և գյուղական բնակչության առաջին ամուսնության միջին տարիքն ըստ սեռի, (9) ՀՀ մշտական բնակչության կրթական մակարդակն ըստ սեռի և տարիքային խմբերի, 2001թ., (10) մահացության հիմնական պատճառներն ըստ սեռի և տարիքային խմբերի, (11) 1985-2004թթ. մանկական մահացության գործակիցը, (12) 1970-2004թթ. մայրամահացության գործակիցն ըստ քաղաքային և գյուղական վայրերի:»,

բ/ 12-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2005թ.» հրապարակման մեջ ներկայացված են «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» ժողովածուում հրապարակված համանման առավել մանրամասն տվյալներ, ընդգրկելով 1940-ից 2005թթ. ժամանակային շարքերի ժամանակահատվածը:»,

գ/ 12-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Մահացությունը և դրա հիմնական պատճառները Հայաստանի Հանրապետությունում, 2005թ.» վիճակագրական զեկույց, հրապարակում է հետևյալ տվյալները. (1) մահացությունը, (2) մահացության կառուցվածքը, (3) մահացությունն ըստ պատճառների, (4) մանկական

մահացությունը, (5) կյանքի սպասվող միջին տևողությունը, (6) մինչև 5 տարեկան երեխաների մահացությունը և դրա պատճառները»:

4. «Բնակչություն» մեթատվյալի տարածման ձևաչափ էջի «Թղթային տարբերակ» հատվածի «Այլ» բաժնում.

ա/ 14-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2005թ.» վիճակագրական ժողովածուն հասանելի է հայերեն լեզվով, անվճար, տրամադրվում է ՀՀ ԱՎԾ-ի կողմից (տեղեկությունների համար տես վերը նշված հասցեները):»,

բ/ 14-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Մահացությունը և դրա հիմնական պատճառները Հայաստանի Հանրապետությունում, 2005թ.» վիճակագրական զեկույց, հասանելի է հայերեն լեզվով, անվճար, տրամադրվում է ՀՀ ԱՎԾ-ի կողմից (տեղեկությունների համար տես վերը նշված հասցեները):»:

/Անհատական /

/Բվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

2. «Կազմակերպության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ» Ձև թիվ 3-ՖՀ հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին

/Զեկույցող` Վ. Դանիելյան, Հ. Տիտիզյան/

Որոշեցին`

Հաստատել «Կազմակերպության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ» Ձև թիվ 3-ՖՀ հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը` համաձայն հավելվածի:

/Նորմատիվ /

/Բվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

/Զեկույցող` Ա. Հարությունյան/

Որոշեցին`

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի նոյեմբերի 7-ի «Ծառայությունների ծավալի մասին» ձև թիվ 1-ծառայություններ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 20-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.«Ծառայությունների ծավալի մասին» ձև թիվ 1-ծառայություններ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության լրացման հրահանգի 2.9 կետում «ֆինանսական (ծածկագիր 65)» բառերը փոխարինել «ֆինանսական գործունեություն (ծածկագիր 65,66, 67)» բառերով:

2.«Ծառայությունների ծավալի մասին» ձև թիվ 1-ծառայություններ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևի 08 տողում «ֆինանսական» բառը փոխարինել «ֆինանսական գործունեություն» բառերով:

/Նորմատիվ /

/Բվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

4.«Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի մայիսի 25-ի թիվ 03-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»
/Զեկուցող՝ Ա. Հարությունյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի մայիսի 25-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների մասին» ձև թիվ 1-SS (Տեղեկատվական տեխնոլոգիա) (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 03- Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

Տեղեկատվական տեխնոլոգիաների մասին» ձև թիվ 1-SS (Տեղեկատվական տեխնոլոգիա) (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության լրացման հրահանգի բաժին III-ի 1-ին կետում «առանց ավելացված արժեքի հարկի » բառերից հետո լրացնել «հաշվեգրման սկզբունքով» բառերով:

*/Նորմատիվ/
/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

5. Այլ հարցեր

5.1 Հաշվետվություն 2006թ. մարտի 6-7-ը Լյուքսեմբուրգում արտաքին առևտրի վիճակագրության գծով կազմակերպված աշխատանքային սեմինարին մասնակցության վերաբերյալ
/Զեկուցող՝ Վ. Դանիելյան, Ա. Պետրոսյան/

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն 2006թ. մարտի 6-7-ը Լյուքսեմբուրգում արտաքին առևտրի վիճակագրության գծով կազմակերպված աշխատանքային սեմինարին մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:

*/Արձանագրային/
/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Նախագահ

Ա. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան